ՏԵՂԵԿԱՏՈՒ

«Արարատ» ամսագրի խմբագրութեան

Ներքին գործոց Տ. Նախարարի առանձին յանձնարարութիւնների ատիճանաւոր պ. Ա. Վ. Պետրովը ուղարկել է Ամենապատիւ Տ. Տեղակալի անունով նուէր Մայր Տաճարին մի փոքրադիր արծաթեայ ոսկեզօծ կանթեղ իր պարագաներով։

Նուիրաբերուած կանթեղը կախուեց Մայր Տաճարի աւանդատան Ս. Գէորգի պատկերի առջև և գրուեց մուտք Տաճարի անօթների ցուցակում։

Այս մասին խնդրում եմ յարգելի խմբագրութեանդ հրատարակել Արարատի մերձակայ համարում։

Մայր Տաճարի Լուսարարապետ՝ ՂԵՒՈՆԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ

«Արարատ» ամսագրի յարգելի խմբագրութեան

Բագուի «Կասպիական» նաւթ արդիւնաբերող ընկերութիւնը, սկսած 1907 թուից ուղարկում է ձրիաբար Ս. Էջմիածնի ելեքտրակ. կայարանի վառելիքի համար սև նաւթ տարեկան 5—6000 փութ, որով Կառավարութիւնս ազատուած է լինում ելեք. կայարանի այդ ծախքից։

Վանական կառավարութիւնս՝ յայտնելով յարգելի ընկերութեան իր խորին շնորհակալիքը, խնդրում է այս մասին հրատարակել «Արարատի» մերձակայ համարում։

Նախագահ Կառավարութեան ՆԵՐՍԷՍ Վ. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ

Քարտուղար Լ. Մ. Ասլանեանց